


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

Ի՞նչ կ'ընեն ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

Ունէ ժողովուրդի մը կենսունակութեան չափանիշը կրնայ որոշուիլ անոր երիտասարդութեան զօրծունէութիւնովը: Այն տեղ ուր երիտասարդութիւնը կը զօրծէ հոն կեանք կայ, արդիւնք կայ: Ներկայ դարուս երիտասարդութիւնը աւելի մեծ և լայն չափով իր բաժինը կը բերէ հասարակական գործերուն, քան ունէ ատենի մը: Ան կը հետաքրքրուի ընկերային ամէն տեսակ գործունէութիւններով, ան պատրաստ է արծարծուելու ունէ մէկ զաղափարականով որ իր սրբախի մօտիկ է, արամազիր է ամէն տեսակ զոհողութեան իր զաղափարականը իրակաշնայնելու: Միայն պէտք է կրակ մը որ զանոնք բռնկեցնէ, մղիչ ոյժ մը՝ որ զանոնք շարժումի մէջ դնէ, զաղափարական մը՝ որ զանոնք հրապուրէ, տաք շունչով կարեկից միջնորդութեամբ մը՝ որ զանոնք սնուցանէ:

Վերջերս Մ. Նահանգներուն մէջ Զանից միութիւնները խաչակրութիւն մը ծրագրեցին ընկերային կարգ մը ախտերու դէմ, շատ մը հաստատութիւններ քաջալիրեցին զանոնք իրենց այս ձեռնարկին մէջ, նոյն իսկ մեծ գիւնանադէտներ զանուեցան՝ որոնք ինկած մարդկութեան աւելի երջանիկ և խաղաղ կեանք մը ապահովելու և ընկերային բարդ խնդիրները լուծելու մէջ իրենց անկարողու-

թիւնը խոստովանեցան և յայտնեցին թէ իրենց յոյսը ահա այսպիսի Բրիտանացունջ ձեռնարկներու մէջ կը կայանայ: Այս խաչակրութիւնը մեծ արձագանգ գտաւ Նանքի Բրիտանաց երիտասարդութեան մէջ, որ լաւ արդիւնք կը խոստանայ:

Ի՞նչ կ'ընեն մեր երիտասարդները: Ուրախ ենք մեր կազմակերպուած Զանից Միութիւններուն համար, որոնք իրենց կարողութեան սահմանին մէջ կ'աշխատին օգտակար ըլլալ: Ներկայ երիտասարդութեան դէմքս պատնայող մեծագոյն վտանգը հաճոյասիրութիւնն է, թոյլ ու դատարկաշրջիկ, զրօսասէր կեանքն է: Ուրախ ենք որ զաղափարապաշտ և նուիրման օգիտ լեցուն կորիզ մ'ունինք: Իայց պէտք չէ գոհանալ նեղ շրջանակի մը մէջ զործելէ, պէտք է եկեղեցիի շրջանակէն դուրս ելլել: Ո՛րչափ մեծ թիւով երիտասարդներ կան՝ որոնք մինչև հիմա բարոյացուցիչ ազդեցութեան մը չըջանակէն դուրս են մնացել, որոնք ա՛յնքան պէտք ունին կարեկից սրտերու գուրգուրալի օժանդակութեան: Ո՛րքան զոհարներ կան մոռացութեան դատապարտուած՝ որոնք կ'սպասեն զիրենք գնահատողի մը այցելութեան: Ո՛րքան ցաւեր կան երիտասուրդ սրտերու մէջ թաղուած՝ որոնք կ'սպասեն զիրենք բուժող զթոտ ձեռքերու:

Օ՛ն, զործի, կազմակերպեալ ջանքով մը փրկելու ձեր նմանները: Տ. Ճ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱԶԻԶԻԷԻ ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՇԻՆՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԸ

Տարիներէ ի վեր շատ անգամներ քաղաքիս դիրքին արժանի՝ եկեղեցիի շէնք մը կառուցանելու մասին մեր տարեկան ժողովներու մէջ խօսակցութիւններ և առաջարկներ կատարուած էին: Ամեն մարդ այսպիսի շէնքի մը պէտքը և կարևորութիւնը կ'ըզգար, սակայն նախնական միջոցներու պակասուեան պատճառաւ սեւ արդիւնք մը յառաջ եկած էր:

Վերջապէս, 1908ին ժողովուրդի մէջ միջանի անհասանք այս խնդրոյն վրայ լըջօրէն կը խորհին և իրենց այս խորհուրդն ու փափաքը կը յայտնէին հանգուցեալ Տիկ. Տօքթ. Ա. Ալթունեանի, որ ջերմեռանդ հոգի մ'ունէր Աստուծոյ նուիրուած և իր բարեգործութիւններով ճանչցուած: Եկեղեցիին բեմը, սեղանը, բեմին նստարանները շինել տուած էր, որ հիմայ այս եկեղեցւոյ զարդերէն են: Կիրակնօրեայ դպրոցին մէջ եռանդով կ'աշխատէր: Օրիորդաց Զանաւորացին կը հրսկէր և Մանկապարտէզը տարիներով հոգացած էր: Ազնիւ Տիկինը նոր եկեղեցի մը շինելու գաղափարին վրայ կը հրճուի եւ կը խոստանայ որ՝ եթէ ժողովուրդը աշխատի իր ձեռքէն եկածը ընելու, ինքն ալ իր ամէն միջոցներովը և ազգեցութիւնովը պիտի աշխատի, եւ երբ Անգլիա երթայ դրամ հաւաքելու գործը պիտի յաջողցնէ: Եւ գնաց Անգլիա օգափոխութեան և իրենները այցելելու համար: Բայց հոն առաքինայիշատակ տիկինը հիւանդացաւ, եւ հակառակ ամէն ջանքերու իր մահկանացուն կնքեց: Սակայն իր ազգակիցները և բարեկամները փափաքը գիտնալով եւ յիշատակը պահել ուզելով իրենց անձնական քսակէն և բարեկամներէն նոյն նպատակաւ գումար մը յառաջ կը բերեն, որուն վրայ Տիար Տօքթ. Ա. Ալթունեան ինքը 300 դիդրն ոսկի կ'աւելցնէ: Անմիջապէս այս վաճառքը ծախու կ'առնուի և պատով մը կը չըրջապատուի: Երբ Տօքթ. Ա. Ալթունեան Հալէպ կը վերադառնայ ժողովուրդին կը խօստանայ թէ եկեղեցին ինքը շինել պիտի տայ եթէ իրենք 2000 Օսմ. ոսկի հաւաքեն:


Ասոր վրայ անմիջապէս այս նպատակով

յանձնախումբ մը կ'ընտրուի, որուն անձնուէր անդամները և անդամ չ'ործի կը լծուին, ամէն միջոց կը գործածեն դրամ հաւաքելու: Եկեղեցւոյ ժողովուրդէն սմանք բաւական առատաձեռնութեամբ տալ կը խոստանան եւ շատեր կանխիկ կուտան: Այս մասնախումբը օտարներէն, Հալէպ այցելող վաճառականներէն և ուրիշներէն 1500 դիդրն ոսկի կը հաւաքեն: Գործի սկսելու համար զրեթէ ամէն բան պատրաստ էր: Բոլոր ժողովուրդը մեծ յոյսով և եռանդով լեցուած էր, մանաւանդ յանձնախումբը: Յանկարծ ընդհանուր պատերազմը սկսաւ և ամէն բան կատեցաւ:

Հոս պէտք է աւելցնել թէ, 1910-11ին եկեղեցիին Զանաւորաց Միութիւնը Տիկ. Ա. Սինանեանի (այն առին Օր. Մարգարեան) թելադրութեամբ և ղեկավարութեամբ և ուրիշ տիկիններու օժանդակութեամբ երկու անգամ ձեռագործի փաղար կը սարքէ, որուն կտորներուն ծախքը և բանելու աշխատանքը ձրիօրէն Միութեան անդամներուն կողմանի կը կատարուի: Այս տօնավաճառներու հասոյթը, 160 Օսմ. ոսկի (մետաղ), շէնքին յանձնախումբին տրամադրութեան տակ կը դրուի:

Երբ ընդհանուր Պատերազմը լնցաւ տարագրեալ հայութեան մնացորդները իրենց տեղերը վերադարձան և ամենուս ծանօթ ազգային ղեկավարութեան բերմամբ երկրորդ անգամ իրենց գաղթականական ցուպը ձեռք առին: Կիլիկիոյ և Հայաստանի գաւառներուն հայերը եկան Հալէպ համախմբուեցան: Ասոնց մէջ 6000ի մօտ Բող. Հայեր կային: Այս վերջինները առաջին պատերազմէն զպրոցներ բացին և իրենց գաւառներուն կրթական գործը ստանձնեցին և կարելի եղածին չափ ալ յաջողեցան: Սակայն Գաթթէ Ճուրայի մէջ եղող հին աղօթարանը շատ նեղ և անյարմար ըլլալուն պատճառաւ ամէն Կիրակի գոնէ երկու անգամ Տէրոջը տունը երթալու վարժ ժողովուրդը, անմխիթար և Աստուծոյ խօսքէն զրկուած մնացին:

Ինչպէս արդէն գիտենք, եկեղեցւոյ շէնքի համար պէտք եղած գրամին մեծ մասը տնտեսապէս կար հոս հոն ցրուած: Գործի ձեռնարկելու փափաք ալ կար, բայց քաղաքական կացութեան անորոշութիւնը վարանումի պատճառ իրար: Երկար խորհրդակ-



ԱԶԻԶԻՅԻ ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԷՆՔԸ

ցութիւններէ ետքը, հետեւեալ պատճառներով համոզում զոյացաւ թէ շատոնց փափաքուած եկեղեցիին շինութեան գործին սկսելու ժամանակը եկած է:

Նախ՝ յարմար չէնքի մը չգոյութեան պատճառաւ ժողովուրդը հոգեւոր միախառնութենէ զրկել փնտաւար է:

Երկրորդ՝ շինութեան սկսիլ շատ մը աղքատ ընտանիքներու գործ պիտի հայթայթէ:

Երրորդ՝ եկեղեցւոյ շինութեան գործը ժողովուրդին միտքը և ձեռքը դբաղեցնելով անոր բարոյական և հոգեւոր եռանդը փառ պիտի պահէ և զայն յուսահատութենէ պիտի ազատէ:

Չորրորդ՝ այս նպատակաւ արդէն հասարակած և հոս ու հոն մնացած զբամները փառնդէ պիտի ազատին:

Տօքթ. Ա. Ալթունեան յիշեալ պատճառները բանաւոր գանկով ընդունեց թէ գործի սկսելու ժամանակը եկած է և յայտնեց թէ ինք պատրաստ է իր խոստացած 1500 Օսմ. ոսկին տալու: Գեանին ծախու առնուած ժամանակ իր առւածը ասոր մէջ չէր: Սակայն գործի սկսելու համար պայման դրաւ

որ ժողովուրդը՝ արդէն պատրաստ գումարին վրայ, չէնքի շինութեան ընթացքին, 500 Օսմ. ոսկի ևս տալու խոստանայ: Եւ այս առաջարկն ալ սիրով ընդունուեցաւ:

Անմի ջապէս ութը անդամներէ բաղկացող շինութեան մասնախումբ մը կազմուեցաւ, որուն ատենապետը եղաւ հովիւը: Քարտուղարը՝ Տիար Ռ. Էճաճեան, գանձապահը՝ Տօքթ. Գ. Սարգիսեան և խորհրդականք՝ Վեր. Յ. Գումրուեան, Վեր. Ա. Շիրաճեան, Տիար Յ. Նիզուր և Տիար Յ. Էքմէճեան:

Վեր. Ա. Շիրաճեան շինութեան գործին հսկելու համար վճարեալ տեսուչ կարգուեցաւ, և Աստուծոյ ողորմութեամբը Յուն. 28, 1923ին մասնաւոր կարճ կրօնական պաշտամունքով մը առաջին հիմնաքարը դրուեցաւ, ներկայ ժողովուրդին մէջ հանդանակութիւն մը եղաւ որուն արդիւնքը հասաւ 19 Օսմ. ոսկիի: Նախկին ծրարները այս եկեղեցին միայնակ չինել էր: Սակայն՝ տեղւոյն սղութիւնը կիրականորեալ Դպրոցի և ուրիշ նպատակներու համար պէտք եղած չէնքերու պակասութիւնը ստիպեց մեզ երկյարկ շինել զայն, ինչպէս որ հիմայ կը տեսնուի: Այս փոփո-

խուժիւնը աւելի մեծ գումարներու պէտքը անհրաժեշտ դարձուց: Ամբողջ ժողովուրդը և մասնախումբը ազօթքով, հաւաքով և գործքով գործին յաջողութիւնը իրենց նըպատակ ըրին: Տուին, այցելեցին, գրեցին, խնդրեցին և ժողովեցին: Հին խոստումները գանձելու ջանացին, նոր խոստումներ տուին և գանձեցին: Տեղւոյ մէջ և այլուր օտար բարերարներու, եկեղեցիներու, բարեգործական հաստատութիւններու, ունեւոր անձերու զիմում կատարեցին: Երկու անգամ վեր. Ա. Շիրաճեան մասնաւոր նամակներով Պէյրութ, Պաղեստին և Եգիպտոս ղրկուեցաւ զրամ հաւաքելու:

Միւսիւ Զօրինկէր, Մր. Շուփ, Տր. Պաւլը Արքեպիսկոպոս Մաքննէս, Մր. Տաճ, Լոնտոնցի Մր. Ճէնթըլ Քաթէթի պէս բարեմէրներ, Ամերիկեան Պօրա Ընկերութիւնը, ամբողջ ժողովուրդը մինչև ամենաաղքատը իրենց նուէրներով մեզ քաջալերեցին: Վերջապէս մօտաւորապէս 4500 Օսմ. ոսկի (մետաղ) գումար մը ծախսուելով 1924ի Նոյ. ին չէնքին տանիքը ծածկուեցաւ, պատուհաններու փեղկերը շինուեցան: Առաջին հոգեւոր պաշտամունքը կատարուելու 1924, Դեկտ. 14ին, Պատ. Տ. Անդրէասեանի ձեռնադրութեան առթիւ, երբ տակաւին չէնքը կիսաւարտ էր: Այն օրէն իվեր կամաց կամաց պակաս մնացած մասերը ամբողջացնելու կը ջանանք: Զանք մը եղաւ և յատակը սիմէնթով ծածկուեցաւ: Ժողովուրդէն ունեւոր ընտանիքի մը տուած նիւթական օգնութեամբը պատերը ծեփել տուինք: Այնթապի Հայիք եկեղեցւոյ յատուկ գումարէ մը օգտուելով մասամբ զրահեղաններ շինուեցան և չէնքը հիմակուայ մեր տեսած վիճակին հասաւ:

Փառք Տէրոջը, որ Իր հաւատացեալ ժողովուրդին հաւատք, յոյս, սէր, քաջութիւն և նուիրման հոգի և եռանդ շնորհեց Իրին պաշտելու համար այս սուրբ բնակարանը շինելու: Շնորհակալութիւն այն բոլոր անձերուն և հաստատութիւններուն որ գործով, առատածէն նուէրներով և անխոնջ աշխատութիւններով այս սուրբ գործը յաջողցնելու համար օգնեցին: Մեծ շնորհակալութիւններ ֆրանսական և Արաբ կառավարութեանց՝ չէնքին կառուցման համար անոնց բնծայած այլ և այլ ղրկութիւններուն համար:

Կ. Յ. Յ.

ՇՈՒՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ

Կենդանիներու հոգեբանութեամբ զբաղող մարդիկ սա աչքի վարնոյ տարբերութիւնները գտած են: Շուններու աչքերը փորձի ենթարկելով գտեր են որ մարդոց աչքերէն տրկար են, բայց ընդհակառակը անոնց լսողութիւնը մարդկային լսողութենէն գերիվեր գտած են: Անոնք զխրութեամբ կը լսեն այն ձայները որ մեզի համար անլսելի են: Շուններու և մարդոց ամենամեծ տարբերութիւնը՝ անոնց խորհեղակերպին մէջ գտեր են: Մենք մարդիկս կ'արտայայտուինք խօսելով և գրելով ընդհանրապէս: Սակայն շունները այսպէս արտայայտուելու կարողութիւնը չունին: Վերջերս Գոլոմպիա Համալսարանին երկու նշանաւոր փրօֆէսօրները «Ֆէլլօ» տնտեսով շուն մը քննած են և գտեր են որ շունը կը հասկնայ խօսուած խոսքը բաները: Ֆրանսական երկու ակնաբոյժներ շուններու և կատուներու աչքերը երկար ժամանակ փորձի ենթարկելէ յետոյ սա եզրակացութեան կը յանգին՝ թէ շուններու և կատուներու աչքի տեսողութեան զօրութիւնը գրեթէ մարդուն հաւասար է: Ուրիշ երկու Ամերիկեան հոգեբաններ կը խօսին շուններու աչքերուն տեսողութեան տկար ըլլալուն մասին և կ'ըսեն թէ քով քովի գրուած երեք ելեկտրական լոյսերը շունները մէկ հատ կը տեսնեն և նոյնպէս քառակուսի և չրջանակաձեւ մակարդակները չեն կրնալ զանազանել, ահա վերջապէս կ'ըսեն թէ հաւանական է որ շունները երբեք զոյն չեն տեսներ: Բայց պէտք է խոստովանիլ որ աչքի տեսողութեան մէջ տեսակ մը կարողութիւն ունին որ մարդուն հաւասար և հաւանական է որ գերիվեր է: Անոնք վայրկեանական ամենաթիթեւ շարժումները կը նշմարեն, իսկ մենք ո'չ այնքան: Որքան ատեն որ լոյսերը, քառակուսի և չրջանակաձեւ ուէ նիւթ մը կայուն են՝ շուն մը համար դժուարին է զանոնք տեսնել, բայց երբ վայրկեանական թիթեւ շարժում մը ունենան զանոնք կը նշմարէ կատարելապէս:

Շուններու լսելու կարողութիւնը մարդոց հաւասար և վեր է: Առօրեական ձայները մարդոց չափ լաւ կը լսեն, թէ և ձայնի աստիճանի պզտիկ տարբերութիւններու այնքան զգայուն չեն: Անոնք կրնան զգալ ձայնի այն

առտիճանը դոր մարդոց համար լսել անկարելի կը թուի: Ռուս հողերաններ գտած են որ շունները կրնան լսել մէկ երկվայրկեանի մէջ 100,000 անգամ թրթռոցող ձայներ: Իսկ մարդու ականջները լսելէ կը դադրին երբ թրթռումները մէկ երկվայրկեանի մէջ 200,000 ի կը հասնին:

Շան հոտառութեան զգայնութեան մասին է՛ն Կօրաւոր փաստը կուտայ Տր. Ճօնսըն իր կատարած մէկ փորձովը: Տր. Ճօնսըն իր շունը պատժել կուզէր անոր պզտիկ մէկ յանցանքին համար. քով քովի երկու նեղ անցքեր չինեց որոնցմէ մէկուն մէջ ելեկարական թել մը երկնցուց՝ անով անասունին ցնցում պատճառելու համար ե ստիպեց որ այդ անցքէն անցնի: Սակայն շունը ելեկարականութեան հոտը առնելով ետ քաշուեցաւ, այնպիսի հոտ մը որ մարդ չի կրնար զգալ:

Ասկէ զատ շունները մկանային զգայնութիւն մ'ալ ունին որ զերենք կը կարողացնէ ճանչնալ իրերու ծանրութիւնը: Շունները իրենց ճամբան ու տեղը իրենց մկանային ըզգայնութեամբ կը ճանչնան: Ահա ասոր համար կենդանիները զիշերները մեզմէ աւելի կը տեսնեն:

Շատ մը պարագաներու տակ մարդուած շուններ, ձիեր եւ ուրիշ կենդանիներ կրնան խաղեր կատարել: Ապացուցուած է որ անոնք այդ խաղերը կը կատարեն մարգդին կողմանէ տրուած անասանելի շարժումներուն հրնազանգելով: Ինչպէս որ մենք զիրար մեր լեզուով կը հասկնանք անոնք ալ իրարու նայելով, շարժումներով կը հասկնան զիրար: Ինչպէս որ «մեքո» շունը կարող եղած է խօսուած շատ մը բառեր հասկնալ եւ զործադրել ասիկայ միծ փաստ մըն է որ շունները կրնան յառաջանալ այս ուղղութեան մէջ: Հոգեբանները կըսեն թէ մարդկային միտքը իր կարողութեան հարիւրին տասը միայն կը գործածէ, եթէ ամբողջը գործածած ըլլայ բոլոր տիեզերքը հասկնալու չափ կարողութիւն ունի: Կարելի է որ շուններն ալ այսպիսի զօրութիւն մը ունին եւ զայն գործածել պիտի սորվին հետզհետէ,

Քաղեց ՇԱՅԿԻՆ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻԻ ԳԵՐԱՆԻՆ ՎՐԱՅ

Եւրոպայի մէջ եղող հին մայր եկեղեցիներէն մէկուն մէջ, առաջնորդը այցելուին կը հրամայէ սեւեռել իր նայուածքը տեղ մը՝ որ կը լուսաւորուի պատուհանէն եկող լոյսով: Այդ տեղ այն կը տեսնէ այնպիսի հիանալի գեղեցկութեամբ քանդակուած դէմք մը՝ որ այդ փառաւոր շէնքին գոհարն է: Այս դէմքին մասին աւանդութիւնը կ'ըսէ թէ երբ ճարտարապետն ու վարպետները շէնքին զարդարանքին համար ծրագրերն էր պատրաստելն, ծերուկ մը կուգայ ու ասոնցմէ արտօնութիւն կը խնդրէ որ ինքն ալ բերէ իր աջակցութիւնը այն գործին: Ասոնք կը տեսնեն թէ անոր երերուն քայլերն ու դողդոջուն ձեւքերն անյարմար են ունէ կարեւոր ծառայութիւն մը մատուցանելու. ուստի ձեղնալար կը զրկեն զինքը արտօնելով իր ուզած պատկերը քանդակելու այդ տեղի գերաններէն միոյն վրայ: Մթութեան մէջ այն իր գործը կը շարունակէ յարատեւութեամբ: Որ մը այնպէս կը պատահի որ այն իր աշխատած վայրէն վար չի գար, ու վեր հրթալով զայն կը գտնեն անկենդան գետին փռուած փայտակերտ կայանին վրայ, իր մարած աչքերը երկինք սեւեռած: Ասոնք հոն կը գտնեն այնպիսի սքանչելի կերպով քանդակուած դէմք մը՝ որ նոյնիսկ ճարտարապետներն ու բոլոր նշանաւոր մարդիկ զայն կը գիտեն՝ իրենց գլուխը բանալով իբր յարգանք, ու այն ատեն միայն տեղեակ կ'ըլլան մահուան խաղաղ քունը քնացող ծերունիի ձիրքին:

Կենդանի Աստուծոյ տաճարին մէջ մենք ամենա ալ սահմանուած ենք Քրիստոսի դէմքին գեղեցկութիւնը քանդակելու մեր անձնական կեանքին ու սրտին վրայ ու ոչ թէ կաթոզիկէի մը գերաններուն կամ պատերուն վրայ: Մեր գործը պէտք է ըլլայ կատարել այս պարտականութիւնը այնպիսի ուշադրութեամբ ու կարողութեամբ՝ որ երբ մենք մահուան քունը քնանանք, մարդիկ յարգանքով նային գեղեցկութեանը այն դէմքին գոր մեր ձեւքերը յօրինած են: Մեզմէ շատերս կըրնանք խորհիլ թէ շատ տկար կամ անկարող ենք այս աշխարհի մէջ Քրիստոսի համար կարեւոր գործ մը կատարելու, բայց ոչ մէկերնիս անկարող ենք Քրիստոսի գեղեցկութիւնը զը-

րողմելու մեր կեանքին վրայ: Եւ մեծ յայտնութեան օրը այնպէս կրնայ պատահիլ որ մեր մէջէն երեւան ելլէ այնպիսի դողդոջուն, երկչոտ ու ամչկոտ հաւատացեալ մը, որուն ձայնն անգամ լսուած չէր մեր ժողովներուն մէջ, որուն զործը լռիկ անկիւն մը ամենուն տեսքէն հեռու մնացած էր, բայց յառաջ բերած է Քրիստոսի նմանութեամբ անմահ գեղեցկութիւն մը որ մեզմէ ամենանշանաւորներուն գործերը պիտի գերազանցէ իր պայծառութեամբը:

ԹԱՐԳՄ. Յ. ԻՆԿԼԻՋԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱԶԻԶԻՅԷ ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՒՆ

ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Ագրիգիէի Հայ Աւետ. դպրոցը կը բաղկանայ երկու բաժիններէ, Մանկապարտէզ որուն երեք կարգերուն մէջ 57 աշակերտներ կան, եւ նախակրթարան՝ որ նախապատրաստական երկու կարգերով միասին 6 դասարաններ ունի, 200 երկսեռ աշակերտութեամբ: Այս դպրոցը աւարտող աշակերտները Մ. Բարձրագոյն Վարժարանի առաջին դասարանը կ'ընդունուին:

Յունիս 21ին Մանկապարտէզի տարեկան հանգէսը կատարուեցաւ եկեղեցիին ներքնասրահը: Եղանակի մը վերջանալուն մօտ ընթացաւարտները կարգով ներս եկան: որոնք

կարմիր կամ կապուտ ժապաւէններ կը կրէին «Մանուկը Ազգին Ապագան» մակագրութեամբ: Ճոխյայտագիրը լաւ ընտրուած նիւթեր կը պարունակէր, որոնք ընդհանուր առումով յաջող կերպով ներկայացուեցան: Արտասանութիւններէն մասնաւոր յիշատակութեան արժանի են, «Պատըլիկ եմ ճշտըլիկ» «Լօգումներ», «Ազատ Անկախ Հայաստան»: «Գառնուկը և Պուպրիկը» կենդանի պատկերը շատ անուշ տպաւորութիւն ձգեց ունկնդրութեան վրայ: Մըջիւնի, թիթեռնիկի, Սիրամարդի եւ այլնի պէս անուշ երգերը մեծ հաճոյք պատճառեցին: Փնահատումի բարձր նիւ մ'ալ պէտք է արձանագրել մարդանքնիւրը վարող պատիկ Զ. Էքմէքճեանի որ իր այս պատիկ հասակին մէջ կարող առաջնորդի մը յատկութիւնները կը ցուցնէր: Մնողները եւ հիւրերը դո՛ւ տպաւորութեամբ բաժնուեցան սրահէն՝ խորին շնորհակալութեան բաժիններ տալով հոգաբարձութեան եւ մանաւանդ վարժուհիներուն:

Դպրոցներու հոգաբարձութիւնը հաճելի զաղափար մը յղացած էր, երեկոյթ մը սարքել ի պատիւ դպրոցին տնօրէնուհիին Օր. Հ. Պիւլին: Այս վերջինը, որ «Աքսիօն Քրէթիլէն»ի միսիօնարուհիներէն է, անձնուիրաբար և ձրիօրէն ստանձնած էր դպրոցին տնօրէնութիւնը, որուն մէջ մեծապէս օգտակար եղած էր իր մանկաժամկտի նորապոյն միթոտներով և աշակերտութեան հանդէպ ցու-



ԱԶԻԶԻՅԷ ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ՈՒՍՈՒՄՆԱՒԱՐՏՆԵՐԸ

ցուցած դուրսերանքովը: «Աքսիօն Քրէթի-
լէն» շալէպի միսիօնարական մարմինը, ու-
սուցչական կազմը, եկեղեցիին երեք ժողով-
ներուն անդամները և անոնց օրհինները հը-
րաւիրուած էին այս երկկոյթին, որուն կը
նախագահէր Վեր. Կ. Յ. Յարութիւնեան:
Նախագահին և հոգաբարձութեան անդամնե-

րուն մէկուն կողմանէ գնահատականներ խօ-
սուեցան տնօրէնութիւն մասին: Ժամանակը
անցաւ հաճելի և մտերմական խօսակցու-
թիւններով և հանդիսականները ուշ ատեն
մեկնեցան իրենց շնորհակալութիւնները
յայտնելով Օր. Հ. Պիւլին մասնաւորապէս և
զպրօցի աշխատաւորներուն ընդհանրապէս:



ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅ ԱՒԵՏ. ԴՊՐՈՑԻ ԲԱՐՁՐ ԿԱՐԴԻ ԱՇԱԿՆՐՏՆԵՐԸ

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅ ԱՒԵՏ. ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Դամասկոս հակառակ կարեւոր կեդրոն մը
ըլլալուն այդ տեղի հասարակութիւնը պէտք
եղած ուշադրութեան արարկայ եղած չէ:
Եկեղեցիին հովիւը, Վեր. Ն. Սարեան, տըն-
տեսական յուսահատեցուցիչ պայմաններու
տակ եկեղեցիին պաշտօնէութեան հետ միա-
սին կ'աշխատի ժողովուրդին կրթական և
հոգեոր. պէտքերը գոհացնել: Բացի քարաշէն
եկեղեցիի նոր շէնք մը կառուցանելու գովելի
ձեռնարկէն՝ յաջողած են բարձր վարժարան մը
պահել տարեկան 517 Օսմ. ոսկի (մետաղ)
ծախքով: Դպրոցը կը պարունակէ քառամ-
եայ շրջանով Մանկապարտէզ մը, 92 երկսեռ
աշակերտներով երկու վարժուհիներու պա-
տասխանատուութեան տակ, և վեց տարուայ
նախակրթարան մը (բաժնուած միջին և բար-
ձր դասընթացներու) 82 աշակերտներով,
յանձնուած երկու վարժուհիներու և 4 ուսու-
ցիչներու հոգաւորութեան:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ՄԱԿԱԲԱՑԵՑԻ ՅՈՒԴԱՅԻ ՔԱԶ ԵՂԱՅՐՆԵՐԸ

(Շարունակութիւն և վերջ)

Թշնամեայ բանակը տարածուած էր շըր-
ջակայ լեռներուն և ձորերուն վրայ, այնպէս
որ կ'ըսուէր թէ անոնց փայլուն զէնքերը ու
ոսկեղէն ու արծաթեղէն վահանները լեռները
բոցերու մէջ վառուածի պէս կը ցուցնէին:

Սակայն և այնպէս Յուդա յարձակման
հրամանը տուաւ. իր մարդիկը առիւծներու
պէս կը կռուէին: Իր եղբայրներէն մին՝ Ե-
ղիազարը, տեսնելով որ փիղերէն մին միւս-
ներէն շատ աւելի զարգարուած կը փայլէր՝ և
կարծելով թէ անոր վրայինը թագաւորն է՝
մինակը յարձակեցաւ զազանին վրայ, ու հազիւ
անոր փորին տակ հասած՝ տակէն զարկաւ
սպաննեց փիղը՝ որ կործանած ատեն Եղիա-
զարի վրայ ինկաւ, ու զայն իր մարմնոյն տա-
կը ճզմեց: Կռիւր կատաղի եղաւ, բայց Յու-
դայի և իր մարդոց համար աւելի զիմադրել
անկարելի էր. ուստի նահանջեցին և երու-

սաղէմի մէջ ամրացան: Հոն ժամանակ մը եւս դիմադրելէ վերջ՝ հրկար պաշարման միջոցին անօթի մնացին սակայն վերջին վայրկեանին լուր հկաւ թէ թշնամիներ Հռովմի վրայ յարձակած են՝ ու գահը վտանգի տակ է: Ուստի թշնամին զինադադար կնքեց Յուդայի հետ՝ և խոստանալով որ Հրեաները այսուհետեւ կատարեալ ազատութեամբ կըրնան իրենց պաշտամունքը կատարել՝ թողուց զանոնք՝ ու անապարանօք իր բանակը առաւ զնաց:

Սակայն այս առերևոյթ խաղաղութիւնը հրկար չը տևեց. թշնամին 20,000 զինուորով Յուդայի վրայ քալեց նորէն: Իսկ Յուդա իր 800 մարդոցմով հազիւ կարճ ժամանակ մը զիմադրելէ վերջ ինք ու իր մարդիկը ինկան



հերոսի մահովը՝ նման Թէրմօփիլէի 800 քաջերուն, որք թէև մեռան՝ սակայն կ'ապրին և պիտի ապրին իրենց ազգի սրտին մէջ:

Յուդայի եղբայրները Յովնաթան և Սիմոն զինքը թաղեցին իրենց հայրերու գերեզմանին մէջ:

Ասոնք առերևոյթ յաղթուեցան, բայց բարոյապէս յաղթեցին: Սիմոնի մահէն վերջ Հրեաները շատ յաջող շրջան մը բոլորեցին, տաճարը մաքրուեցաւ ու նորոգուեցաւ, և Մակաբայիցի եղբայրք այս արի մարտիրոսութիւնը այնպէս լաւ ազդեցութիւն մ'ըրաւ Հրէից վրայ՝ որ անոնց ամենն ալ պատրաստ էին թէ ապրելու և թէ մեռնելու իրենց հայրերուն սուրբ հաւատքին պաշտպանութեանը համար: (ՎԵՐՋ)

ՊԶՏԻԿ ՊԱՐՏԻՉՊԱՆՈՒՀԻՆ

ԹԱՐԳ. ԳԵՐՄ. Ա. Ժ.



Ո՛հ ծա բաւէն էք ծըռեր, ծաղկունք իմ և ծառեր:

2 Վարդը կարմիր գեղանի,
Շուշանն իմ ծիրանի.
Թէ սղառէք բոսքէ մ'ալ
Կը խըմէք ջուր զուլալ:

3 Ահա բերի անուշ ջուր,
Խմէ յազիր կուշտ ու կուռ.
Մաղկէ՛, լուրէ՛ հոտաւէտ,
Ապրէ՛ զօհ առ յաւէտ:

Վերիցով «Նոր Աւետարներ» թիւ 16, էջ 123ին վրայ, բ. սիւնակ, վերէն տող 35ին վրայ «Ասկէ ետքը եկեղեցին...»-ով սկսող նախադասութիւնը պէտք է կարգաւ նոյն էջին վրայ վերէն քսաներորդ տողէն անմիջապէս վերջը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԱՅԻՆԱԿԱՆ

Ի՞նչ Կ'ընեն Մեր Երեսասարդները S. Ճ. Խ.

ՅՕԴՈՒԱՇՆԵՐ

Ազիզիկի Հայ Աւետ. Եկեղեցւոյ Երևուքեան Գործը
ՎԵՐ. Կ. Յ. Յ.

Շունեռու Աշխարհին

Բաղից ՇԱՅԿԷՆ

ՀՈԴԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Մայր Եկեղեցիի Դերասին վրայ

ԹԱՐԳՄ. Յ. ԻՆԿԼԻՋԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կրօնաբարոյական, Գիտական, Կրթա-
կան երկչարաթաթերի:

Արտօնատէր, ՎԵՐ. Կ. Յարութիւնեան
Պատասխանատու Տնօրէն, S. Ճ. Խրտրեան

ԲԱԺՆԵԳԻՆ

Սուրբոյ համար տարեկան 2 ՄԷՃԻՍ

Արտասահման » » 1 ՏՊԼԱՐ

Հասցէ—

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287
ALEP SYRIE